ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 412-Ա

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՆԻՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-018-0110-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.47 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 0.00744 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՄԱՆՎԵԼ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով,ՀՀ «Հողային օրենսգրքի» 2010 թվականի ապրիլի 27-ի N 50-Ն օրենքով, հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի Արտանիշ գյուղի բնակիչ Մանվել Ռազմիկի Եղիազարային հատկացված գյուղնշանակության 0.47հա հողամասին կից 0.00744հա հողամասը իրեն տրամադրելու մասին դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ճամբարակ համայնքի Արտանիշ բնակավայրի 05-018-0110-0004 կադաստրային ծածկագրով գտնվող համայնքի բնակիչ Մանվել Ռազմիկի Եղիազարյանին՝ ծնված 12.05.1969թ. հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 16.01.1991թ.թիվ 904-որոշմամբ սեփականության իրավունքով հատկացված 0.47 հա գյուղնշանակության հողամասին կից 0.00744հա մակերեսով հողամասը 26.12.2002 թվականի ՀՀ ՀՕ 510-Ն օրենքով փաստացի տիրապետման իրավունքով ճանաչել Մանվել Եղիազարյանի սեփական գույք:
2. Համայնքի կողմից Մանվել Եղիազարյանին սեփականության իրավունքով հատկացված 0.47744 հա հողամասը չի գտնվում ՀՕ 60-րդ հոդվածի ցանկում և բավարարում է ՀՕ 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

20 __ թ. _____ ____
ք.Ճամբարակ